ԱԳՐԱՐԱՅԻՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հոդվածի հղումը. Մկրտչյան Տ., Գևորգյան Ռ., Խաչատրյան Ա., Խուրշուդյան Լ., Վարդանյան Թ. (2024), Պարենային անվտանգության հիմնախնդիրները ՀՀ-ում, *Տնտեսություն և հասարակություն, ՀՊՏՀ, Տնտեսագետ*, 3(6), 7-40,
DOI: 10.52174/29538114_2024.3-7
Ներկայացվել է խմբագրություն՝ 21.11.2024 թ.
Ուղարկվել է գրախոսության՝ 24.11.2024 թ.
Երաշխավորվել է հրապարակման՝ 30.12.2024 թ.

ՏԱԹԵՎԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ
ՀՊՏՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու
https://orcid.org/0000-0001-5053-6303

ՌՈՒԶԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՀՊՏՀ վիճակագրության ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու
https://orcid.org/0000-0002-4371-4148

ԱՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ հետազոտող, տնտեսագիտության թեկնածու
https://orcid.org/0000-0002-6883-455X

ԼՈՒՍԻԿ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ
ՀՊՏՀ շարունակական կրթության բաժնի գլխավոր մասնագետ, ասպիրանտ
https://orcid.org/0009-0004-2566-4564

ԹԵՐԵԶԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի մագիստրանտ
https://orcid.org/0009-0006-7335-8910

ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Տնտեսության կայուն զարգացման անկյունաքարը և կյանքի որակի բարելավման կարևորագույն նախապայմաններից մեկը պարենային անվտանգության ապահովումն է: Բնակչության պարենային անվտանգության կարիքների բավարարումը ՀՀ Կառավարության առաջնահերթություններից է, որի վրա է խարսխված հեռանկարում կայուն տնտեսության զարգացման տեսլականը: Այս առումով, պարենային անվտանգությանն ուղղված հետևողական և կենսունակ քաղաքականության իրագործումը ենթադրում է պարենի անվտանգության ընթացիկ վիճակի համակողմանի վերլուծություն ցածր ինքնաբավություն ունեցող ապրանքատեսակների մասով: Ըստ այդմ՝ սույն հոդվածի շրջանակներում փորձել ենք ուսումնասիրել ցորենի, բուսական յուղի, շաքարավազի, թռչնա-

մսի և խոզի մսի հետ կապված ռեսուրսների ձևավորման (արտադրություն, ներմուծում և տարեսկզբի պահուստներ) և դրանց օգտագործման ուղղությունները (սննդամթերք, սերմացու, անասնակեր, կորուստներ, արտահանում), ինչպես նաև ներկայացնել ինքնաբավության և ներմուծումից կախվածության մակարդակները յուրաքանչյուր ապրանքախմբի համար՝ անդրադառնալով նաև ներմուծման աշխարհագրական կառուցվածքին: Վերլուծության արդյունքները վկայում են պարենային անվտանգության հիմնախնդիրների օրհասականության մասին՝ նախանշելով դրանց լուծմանն ուղղված նպատակային քաղաքականության կենսագործման հրատապությունը, ինչպես նաև ուրվագծում են պարենային անվտանգության «հետնախորշերը»՝ ընդգծելով այն ուղղությունները, որոնք առավել մեծ ջանքեր են պահանջում: Այս առումով, առաջնային կարևորություն ունեն վերոնշյալ ապրանքատեսակների անխափան ներմուծման համար գործընկեր երկրների հետ գործարար կապերի ամրապնդումը և տեղական կայուն արտադրական հնարավորությունների ընդլայնումը, որը հնարավորություն կտա երկարաժամկետում նվազեցնելու պարենային անվտանգության ռիսկերը:

Հիմնաբառեր. *պարենային անվտանգություն, ինքնաբավություն, ցորեն, բուսական յուղ, շաքարավազ, խոզի միս, թռչնամիս*

JEL: Q10, Q18

DOI: 10.52174/29538114_2024.3-7

Ներածություն: Համաշխարհային տնտեսության զարգացման լրջագույն մարտահրավերներից մեկը պարենային անվտանգությունն է, որը մշտապես եղել է միջազգային տարբեր կառույցների ուշադրության առանցքում: Ըստ ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) «Աշխարհում պարենային անվտանգություն և սնուցման իրավիճակը» 2023 թ. զեկույցի՝ 2022 թ. աշխարհում 690–783 միլիոն մարդ սովի է մատնված, որը 122 միլիոնով գերազանցում է մինչհամավարակային ցուցանիշը[1]: COVID-19 համավարակով և ռուս-ուկրաինական պատերազմով պայմանավորված շոկերը, ինչպես նաև առանձին տարածաշրջաններում բախումները և կլիմայական փոփոխությունները հանգեցրել են պարենային անվտանգության հիմնախնդիրների խորացմանը: Աշխարհաքաղաքական այս զարգացումներից անմասն չէ նաև Հայաստանը, որտեղ պարենային անվտանգության հիմնախնդիրներն աստիճանաբար սրվել են: Պարենի համաշխարհային ծրագրի (ՊՀԾ) «Հայաստանում պարենային ապահովության և խոցելիության գնահատման» 2023 թ. զեկույցի համաձայն՝ 2020 թ. ի վեր պարենային անվտանգության հիմնախնդիրները խորացել են[2], իսկ 2023-ին պարենային ապահովությունը՝ վատթարացել: ՊՀԾ գնահատումների համաձայն՝ 2023 թ. տնային տնտեսությունների 30%-ը պարենային անապահով վիճակում է, որը 7 տոկոսային կետով աճել է 2022 թ. համեմատությամբ: Ավելին, տնային տնտեսությունների 44%-ը պարենային ապահովության սահմանային շեմին մոտ է, որը խոսում է այն մասին, որ նոր շոկերի ի հայտ գալու դեպքում բնակչության գրեթե կեսը կարող է հայտնվել պարենային անապահովության ռիսկի տակ[3]: Հետևապես՝ ՀՀ պարենային անվտանգության մակարդակի բարձրացումը հրա-

[1] Աղբյուրը՝ FAO, IFAD, UNICEF, WFP and WHO. 2023. The State of Food Security and Nutrition in the World 2023, Urbanization, agrifood systems transformation and healthy diets across the rural–urban continuum. Rome, FAO, page VII, https://doi.org/10.4060/cc3017en

[2] Աղբյուրը՝ Armenia, Annual Country Report 2023, Country Strategic Plan 2019-2025, էջ 3, https://docs.wfp.org/api/documents/WFP-0000157691/download/?_ga=2.79591060.1272975709.1725956427-172178181.1719818587

[3] Տե՛ս նույն աղբյուրը, էջ 8:

մայական անհրաժեշտություն է, ինչը պահանջում է ոլորտային հիմնախնդիրների խորքային հետազոտություն՝ ուղենիշների վերանայման, գերակայությունների ճշգրտման, ռազմավարական մոտեցումների մշակման և իրագործման համար:

Հոդվածի նպատակը ՀՀ-ում պարենային անվտանգության ներկա իրավիճակի համակողմանի հետազոտությունն է: Ըստ այդմ՝ հոդվածում առաջադրվում են հետևյալ հիմնական խնդիրները՝ վերլուծել ինքնաբավության ցածր մակարդակ ունեցող պարենային ապրանքատեսակների անվտանգությունը ՀՀ-ում, ուսումնասիրել հիմնական ցուցանիշների փոփոխման միտումները և բացահայտել ՀՀ-ում պարենային անվտանգության հիմնախնդիրները:

Գրականության ակնարկ: Մասնագիտական և հետազոտական շրջանակներում 20-րդ դարի վերջերին սկսեց լայնորեն քննարկվել և լայն տարածում ստանալ «պարենային անվտանգություն» հասկացությունը: 1974 թ. Պարենի համաշխարհային գագաթնաժողովում, որը կազմակերպել էր ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը հացահատիկի համաշխարհային գների եռապատկումից հետո, պարենային անվտանգությունը սահմանվել է որպես՝ «Շուկաներում պարենային ապրանքների կայունության և առկայության ապահովումը աշխարհի բոլոր երկրների համար»: Ավելի ուշ, ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության սահմանմամբ, պարենային անվտանգությունը բնութագրվեց որպես իրավիճակ, երբ հասարակության բոլոր անդամներն ունեն ֆիզիկական, սոցիալական և տնտեսական հասանելիություն բավարար, անվտանգ և սննդարար պարենամթերքներին, որը բավարարում է նրանց կենսապահովման կարիքները և նպաստում ակտիվ ու առողջ կյանքին:

1996 թ. Պարենի համաշխարհային գագաթնաժողովում սահմանվեցին պարենային անվտանգության հիմնական հատկանիշները՝ պարենի առկայությունը, հասանելիությունը, օգտագործումը և ապահովման կայունությունը: Ըստ ՊԳԿ-ի՝

- Պարենի ֆիզիկական առկայությունը վերաբերում է արտադրության մակարդակին, պահուստների ծավալներին և արտաքին առևտրի համամասնությանը:
- Պարենի մատչելիությունը սահմանվում է որպես բավականաչափ պարենամթերք ձեռք բերելու տնային տնտեսությունների կարողություն, որը կախված է տնային տնտեսությունների եկամուտների և պարենամթերքի գների մակարդակից:
- Պարենի օգտագործումը վերաբերում է առողջ սննդակարգին և պարենամթերքի որակին:
- Պարենի անվտանգության կայունությունը դիտարկում են որպես մյուս երեք չափումների շարունակական և առանց խափանումների ապահովում[4]:

Հարկ է նշել, որ ՄԱԿ-ի հազարամյակի զարգացման նպատակներից առաջինն անուղղակիորեն առնչվում է պարենային անվտանգությանը, այն է՝

[4] Աղբյուրը՝ The State of Food Security and Nutrition in the World. 2023, էջ 246, https://openknowledge.fao.org/server/api/core/bitstreams/1f66b67b-1e45-45d1-b003-86162fd35dab/content

ծայրահեղ աղքատության և սովի վերացում[5]: 2015 թ. ՄԱԿ-ի պատմական գագաթնաժողովում ընդունված և 2016 թվականի հունվարի 1-ից պաշտոնապես ուժի մեջ մտած «Կայուն զարգացման գլոբալ նպատակներից» երկրորդն արդեն որոշակիորեն վերաբերում է պարենային անվտանգությանը՝ վերացնել սովը, հասնել պարենային անվտանգության և բարելավված սնուցման, խթանել գյուղատնտեսության կայուն զարգացումը[6]:

Տարեցտարի խորացող թերսնուցման համապատկերում և սովի վերացման կայուն զարգացման նպատակին հասնելու տեսանկյունից՝ պարենային անվտանգությունը մշտապես եղել և շարունակում է մնալ թե՛ հայազգի, թե՛ արտասահմանյան մի շարք տնտեսագետների հետազոտությունների առանցքում: Ըստ Ա. Ալտուխովի՝ պարենային անվտանգությունը բնակչության բոլոր խավերին անհրաժեշտ քանակով և որակով պարենամթերքի կայուն ապահովումն է՝ ներքին և արտաքին շոկերին դիմակայելու համար[7]: Տնտեսագետ Վ. Տիխոմիրովան կարծում է՝ պարենային անվտանգությունը պետության՝ բնակչության բոլոր խմբերին ակտիվ և առողջ կյանք վարելու համար անհրաժեշտ քանակությամբ անվտանգ, առողջ և բարձրորակ սննդամթերքին հասանելիություն ապահովելու կարողությունն է[8]: Ֆ. Միխայլովը, Մ. Չերնենկոն պարենային անվտանգությունը բնորոշում են որպես երկրի տարածքում պարենի հիմնական տեսակների կայուն արտադրություն, որը կապահովի երկրի պարենային անկախությունը[9]:

Պարենային անվտանգությունն առավել ընդգրկուն է բնորոշել տնտեսագետ Կ. Նազարմատովան՝ որպես պարենային անվտանգության նպատակներ սահմանելով անվտանգ և բարձրորակ պարենային ապրանքների ֆիզիկական և տնտեսական հասանելիության ապահովումը՝ ակտիվ, առողջ ապրելու համար անհրաժեշտ ֆիզիոլոգիական նորմերին համապատասխան, սննդամթերքի հիմնական տեսակների ներքին արտադրության կայուն զարգացումը, որը կապահովի երկրի պարենային անկախությունը, սպառված սննդամթերքի անվտանգության և որակի ապահովումը, պարենային անվտանգությանը սպառնացող ներքին և արտաքին սպառնալիքների կանխարգելումը, արտակարգ իրավիճակներում և՛ բարձրորակ, և՛ անվտանգ սննդամթերքի ռազմավարական պաշարների ձևավորումը[10]:

---

[5] Աղբյուրը՝ Հազարամյակի զարգացման նպատակները (ՀԶՆ-ներ) և դրանց թիրախային ցուցանիշները, ՀԶՆ-ներ. 2000–2015 թթ., էջ 6, https://www.unicef.org/armenia/media/1766/file/%D4%B1%D5%B7%D5%AD%D5%A1%D6%80%D5%B0%D5%A8,%20%D5%B8%D6%80%20%D5%B4%D5%A5%D5%B6%D6%84%20%D5%A5%D5%B6%D6%84%20%D5%B8%D6%82%D5%A6%D5%B8%D6%82%D5%B4.pdf

[6] Տե՛ս նույն տեղը, էջ 11:

[7] Աղբյուրը՝ **Алтухов А.И.,** Продовольственная безопасность в контексте реализации новой редакции ее доктрины, https://cyberleninka.ru/article/n/prodovolstvennaya-bezopasnost-v-kontekste-realizatsii-novoy-redaktsii-ee-doktriny

[8] Աղբյուրը՝ **Тихомирова В. А.,** Продовольственная безопасность: сущность понятия, https://vest.rea.ru/jour/article/view/108/108

[9] Աղբյուրը՝ Сущность и содержание продовольственной безопасности, и ее место в системе национальной безопасности, https://cyberleninka.ru/article/n/suschnost-i-soderzhanie-prodovolstvennoy-bezopasnosti-i-ee-mesto-v-sisteme-natsionalnoy-bezopasnosti

[10] Աղբյուրը՝ Продовольственная безопасность – важнейшее условие развития экономики, https://www.avekon.org/papers/579.pdf

Պարենային անվտանգության հիմնախնդիրներին անդրադարձել է նաև տնտեսագետ Յո. վոն Բրաուն՝ առավելապես շեշտադրելով ցածր եկամուտ ունեցող երկրներում տնտեսական շոկերով և պարենամթերքի գների տատանումներով պայմանավորված սպառնալիքները[11]:

Տնտեսագետներ Ջ. Ինգրամը, Փ. Էրիքսենը և Դ. Լիվերմանն իրենց աշխատությունում ներկայացրել են գլոբալ պարենային համակարգերի համար պարենային անվտանգության բաղադրիչներից յուրաքանչյուրի կարևորությունը: Հեղինակները վստահ են, որ գլոբալ մակարդակում պարենի արտադրությունը բավարարում է բնակչության պարենային կարիքները, սակայն դրա բաշխումը խիստ անհավասարաչափ է: Նրանք նշում են, որ պարենի ֆիզիկական առկայությունը կախված է գյուղատնտեսական արտադրության պայմաններից, որոնք զգայուն են կլիմայական փոփոխությունների նկատմամբ և ընդգծում են տեխնոլոգիական առաջընթացի դերը՝ կլիմայական բացասական հետևանքները մեղմելու տեսանկյունից[12]:

Հայաստանում պարենային անվտանգության հիմնախնդիրներին անդրադարձել են տնտեսագետներ Ս. Ավետիսյանը, Ա. Մարկոսյանը, Կ. Գրիգորյանը, Լ. Խաչատրյանը, Մ. Պետրոսյանը, Բ. Չախմախչյանը, Վ. Մկրտչյանը, Կ. Հարությունյանը և ուրիշներ: Ըստ պրոֆեսոր Ս. Ավետիսյանի՝ «Երկրի պարենային անվտանգությունը համարվում է ապահովված, եթե առկա է տնտեսության զարգացման այնպիսի մակարդակ, որը երաշխավորում է բնակչության համար առողջապահական (ֆիզիոլոգիական) նորմերին համապատասխանող սննդամթերքի ֆիզիկական ու տնտեսական մատչելիությունը, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում սննդամթերքի մատակարարման անհնարինության (անբավարարության) դեպքում՝ պարենային ճգնաժամերի առաջացման բացառումը»: Այլ կերպ ասած՝ պարենային անվտանգությունը երկրի տնտեսության այնպիսի վիճակն է, երբ առկա է անհրաժեշտ քանակությամբ պարեն, և բնակչությունն այն ձեռք բերելու հնարավորություն ունի: Այս առումով, տարբերում են «հասարակության պարենային ապահովում» և «երկրի պարենային անվտանգություն» հասկացությունները: Ս. Ավետիսյանի կարծիքով՝ «հասարակության պարենային ապահովումը» հասարակության բոլոր անդամներին բավարար քանակությամբ անվտանգ և որակյալ պարենով ապահովումն է, որի համար օգտագործվում են ոչ միայն երկրում արտադրվող, այլև ներմուծվող և օգնության կարգով ստացվող պարենային մթերքները: Իսկ «երկրի պարենային անվտանգությունը» սեփական ռեսուրսներով բնակչության համար առողջապահական նորմերին համապատասխան սննդամթերքի ֆիզիկական ու տնտեսական մատչելիության ապահովումն է ինչպես սովորական, այնպես էլ արտակարգ իրավիճակներում[13]:

---

[11] Աղբյուրը՝ **J. von Braun,** Food-Security Risks Must Be Comprehensively Addressed, https://gender.cgiar.org/publications/food-security-risks-must-be-comprehensively-addressed

[12] Աղբյուրը՝ **Ingram J., Ericksen P., Liverman D.,** Food Security and Global Enviromental Change, 2010, https://api.pageplace.de/preview/DT0400.9781136530890_A23850234/preview-9781136530890_A23850234.pdf

[13] Տե՛ս **Ավետիսյան Ս.,** Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության հրատապ հիմնախնդիրներ, Եր., «Տնտեսագետ», 2014, էջ 16, https://asue.am/upload/files/amberd-economic-policy/Avetisyan_S.pdf

Ա. Մարկոսյանը պարենային անվտանգությունը դիտարկում է որպես տնտեսական անվտանգության հիմնական և կարևոր բաղկացուցիչ: Նրա կարծիքով՝ «Համաշխարհային տնտեսության գլոբալացման և ինտեգրման ներկա պայմաններում պարենի առկայությունը և անվտանգությունը յուրաքանչյուր պետության ազգային անվտանգության ապահովման հիմնախնդիրներից են»[14] և «Պարենային անվտանգությունը միջնաժամկետ հեռանկարում երկրի ազգային անվտանգության ապահովման աղբյուրներից մեկն է, նրա պետականության և ինքնիշխանության պահպանման գործոնը, ժողովրդագրական քաղաքականության իրականացման կարևորագույն տարր, անհրաժեշտ պայման իրականացնելու ազգային առաջնահերթության՝ քաղաքացիների կյանքի որակի բարձրացումը՝ կենսապահովման բարձր ստանդարտների երաշխավորման ճանապարհով»[15]:

Կ. Գրիգորյանը համաշխարհային պարենային հիմնախնդիրը բնորոշել է որպես 21-րդ դարի չլուծված գերխնդիրներից: Դեռևս 2011 թ. իր աշխատության մեջ տնտեսագետը նախանշում էր, որ թեև պարենամթերքների արտադրությունը կաճի, այնուհանդերձ, գլոբալ պարենային հիմնախնդիրները առավել կխորանան այս հարյուրամյակում[16]:

Հետազոտության մեթոդաբանություն: Հետազոտության համար տեսական հիմք են հանդիսացել դասական և ժամանակակից տնտեսագետների՝ պարենային անվտանգության վերաբերյալ տեսակետներն ու մոտեցումները, ինչպես նաև պարենի առկայության գնահատման հայրենական և արտասահմանյան հետազոտություններն ու վերլուծությունները:

Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների բազան, ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության, Պարենի համաշխարհային ծրագրի զեկույցներն ու վերլուծական հրապարակումները, ՏՀԶԿ տվյալների բազան, ինչպես նաև ՀՀ պարենային անվտանգության համակարգի զարգացման ռազմավարությունը: Հարկ է նշել, որ սույն հետազոտության հիմնական գործիքը ՀՀ պարենային հաշվեկշիռն է, որը «ագրեգացված և վերլուծական ցուցանիշների այնպիսի համակարգ է, որ ներկայացնում է երկրի պարենամթերքի հիմնական տեսակների ձևավորման աղբյուրների, առաջարկի և դրանց օգտագործման ուղղությունների վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն տրված ժամանակահատվածի համար՝ տարեկան կտրվածքով»: Դա հնարավորություն է տալիս որոշելու պարենամթերքի հիմնական տեսակների ինքնաբավության մակարդակը, որը ցույց է տալիս երկրի՝ տվյալ ապրանքի նկատմամբ պահանջարկի բավարարման աստիճանը սեփական միջոցների հաշվին[17]:

---

[14] **Մարկոսյան Ա., Խաչատրյան Լ.,** Պարենային անվտանգության ապահովման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում, 21-րդ դար, թիվ 6 (52), 2013, էջ 126, https://cyberleninka.ru/article/n/problemy-obespecheniya-prodovolstvennoj-bezopasnosti-ra-i-puti-ih-resheniya/viewer

[15] **Մարկոսյան Ա., Պետրոսյան Մ.,** ՀՀ պարենային անվտանգության արդի հիմնահարցերը, 21-րդ դար, թիվ 6 (34), 2010, էջ 55, https://cyberleninka.ru/article/n/sovremennye-problemy-prodovolstvennoy-bezopasnosti/viewer

[16] Տե՛ս **Գրիգորյան Կ.,** Պարենային անվտանգության ապահովման և աղքատության նվազեցման հիմնախնդիրների լուծման ուղիները ՀՀ-ում, Եր., ՀՊԱՀ, 2011, էջ 42, 48, https://haygirk.nla.am/upload/1941-/parenajinanvtang_2011.pdf

[17] Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտեի կայքէջ, https://armstat.am/file/Qualitydec/am/22.13.pdf

Ինքնաբավության ցածր մակարդակ ունեցող ապրանքատեսակների ներմուծման աշխարհագրական կառուցվածքը ներկայացնելու համար հեղինակները հաշվարկները կատարել են ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից հրապարակվող «ՀՀ արտաքին առևտուրը երկիր-ապրանք կտրվածքով» տվյալների բազայի հիման վրա:

Հետազոտության շրջանակներում մասնագիտական գրականության մեջ պարենի անվտանգության բովանդակության մեկնաբանման և առկա բազմաթիվ սահմանումների դուրսբերման, դրանց ընդհանուր կողմերի բնութագրման և մեկնաբանման համար օգտագործվել են պատմական, նկարագրական և մեկնաբանման, որակական եզրահանգումների և ընդհանրացման մեթոդները: Ցածր ինքնաբավություն ունեցող ապրանքատեսակների մասով պարենի անվտանգության ընթացիկ վիճակի հետազոտության համար կիրառվել են նկարագրական, դինամիկ հետազոտության, համեմատման, գիտական վերացարկման, համակարգային վերլուծության և համադրության մեթոդները: Նշված մեթոդների կիրառումը հնարավորություն է տալիս ստանալու Հայաստանի պարենային անվտանգության համընդգրկուն պատկերը, ինչպես նաև վերհանելու այն բացերը, որոնց վերացման ուղղությամբ էլ ավելի մեծ ջանքեր պետք է գործադրվեն:

Վերլուծություն: Պարենի առկայությունը բնորոշում է արտադրության, պահուստների փոփոխության, ներմուծման, արտահանման, մարդասիրական օգնության միջոցով ստացված պարենի ֆիզիկական առկայությունը երկրում[18], այլ կերպ ասած՝ բնակչության գնողունակ պահանջարկը բավարարող ծավալներով սննդամթերքի առաջարկի ապահովումը: Այս առումով, կարևոր նշանակություն ունի պարենային հաշվեկշռի համակողմանի վերլուծությունը, որը պատկերացում կտա պարենային ապրանքների արտադրության, ներմուծման, արտահանման, սպառման ծավալների և ինքնաբավության ու ներմուծումից կախվածության մակարդակների փոփոխման միտումների վերաբերյալ: Հանրապետության պարենային հաշվեկշռում ընդգրկվող ապրանքախմբերի կազմը ձևավորում է երկրում առավել լայն սպառում ունեցող ապրանքատեսակներով: Ըստ այդմ՝ ՀՀ պարենային հաշվեկշիռը կազմվում է հետևյալ 21 ապրանքախմբի համար՝ ցորեն, տարեկան, գարի, վարսակ, եգիպտացորեն, բրինձ, այլ հատիկավորներ, կարտոֆիլ, բանջարեղեն, միրգ (բացի խաղողից), հատիկաընդեղենային մշակաբույսեր, բուսական յուղ, շաքար, ձու, կաթ, տավարի, խոզի, ոչխարի և այծի, թռչնի միս, ձուկ, խաղող: Հաշվի առնելով, որ պարենի առկայության հիմնախնդիրների վերհանման տեսանկյունից առաջնային նշանակություն ունի ցածր ինքնաբավության մակարդակ ունեցող ապրանքախմբերի ու ապրանքատեսակների դիտարկումը, վերլուծությունն իրականացրել ենք ցորենի, շաքարավազի, բուսական յուղի, խոզի և թռչնամսի համար:

Ցորեն: 2010–2015 թթ. ցորենի արտադրության ծավալները ՀՀ-ում շարունակաբար աճել են, ընդ որում, արտադրության ծավալի ամենաբարձր մակարդակներն արձանագրվել են 2015 և 2016 թվականներին՝ կազմելով համապատասխանաբար՝ 362.7 հազ. տոննա և 350.4 հազ. տոննա:

[18] Տե՛ս Պարենային անվտանգության համակարգի զարգացման ռազմավարություն, էջ 14, https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/GVC4-C2D2-66AC-4391/1083.1.pdf

Աղյուսակ 1

Ցորենի ցանքատարածությունները, բերքատվությունը և համախառն բերքը ՀՀ-ում 2010–2023 թթ.[19]

Տարեթիվ	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022	2023
Ցորեն														
Տարածություն (հազ. հա)	87.6	77.8	93.7	99.7	106.4	108.9	108.7	82.4	66.7	59.9	59.4	59.1	56.8	71.4
Բերքատվություն (g/հա)	21.2	28.8	26	31.3	32.3	33.4	32.4	21.8	28.2	19.6	22.5	16.8	24.5	25.3
Համախառն բերք (հազ. տոննա)	183.5	224.1	243.1	311.6	338.2	362.7	350.4	176.4	187.5	112.6	132.0	97.2	138.6	177.9

2016 թ. հետո ցորենի արտադրության ծավալները դրսևորել են նվազման միտում, որը շարունակվել է մինչև 2021 թ., մասնավորապես՝ 2017-ին, 2016-ի համեմատությամբ, ծավալները գրեթե կրկնակի կրճատվել են: Ցորենի արտադրության ամենափոքր ծավալն արձանագրվել է 2021 թ.՝ 97.2 հազ. տոննա: 2022–2023 թթ. ցորենի արտադրության ծավալները կրկին սկսել են աճել, մասնավորապես՝ 2022 թ. աճը նախորդ տարվա նկատմամբ կազմել է 42.6%, իսկ 2023 թ.՝ 28.4%:

Չնայած վերջին երկու տարիների աճի բավականին բարձր տեմպերին՝ 2023 թ. հանրապետությունում արտադրված ցորենի քանակը չի հասել անգամ 2010 թ. մակարդակին, իսկ դիտարկվող ժամանակահատվածի ամենաբարձր՝ 2015 թ. մակարդակից շուրջ երկու անգամ ցածր է:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում ցորենի համախառն բերքի մինչև 2015 թվականի աճը պայմանավորված է եղել ինչպես ցանքատարածությունների ավելացմամբ, այնպես էլ բերքատվության ցուցանիշի (33.4 g/հա) բարձր մակարդակով: Այսպես՝ 2015 թ., 2010 թ. համեմատությամբ, համախառն բերքի ծավալն ավելացել է 179.2 հազ. տոննայով, ընդ որում, ընդհանուր հավելաճի շուրջ 25%-ն է միայն պայմանավորված ցանքատարածությունների ավելացմամբ, իսկ ավելի քան 75%-ը բերքատվության աճի արդյունք է: 2016 թ. հետո դիտվել է ցանքատարածությունների կրճատում մինչև 2022 թ. ներառյալ, միաժամանակ նվազել է նաև ցորենի բերքատվության մակարդակը:

Դիտարկվող ժամանակահատվածում Հայաստանում ցորենի բերքատվության միջին մակարդակը տատանվել է մեկ հեկտարից 17–33 ցենտներ միջակայքում: Բերքատվության առավելագույն մակարդակն արձանագրվել է 2013–2016 թթ.՝ 31-33 g/հա, իսկ նվազագույնը՝ 2021-ին՝ 16.8 g/հա: Համեմատության համար նշենք, որ ցորենի բերքատվության մակարդակով 2021 թ. համաշխարհային առաջատարներն են. Գերմանիա՝ 75.4 g/հա, Ֆրանսիա՝ 68.0, Եգիպտոս՝ 64.0, Չինաստան՝ 57.7 g/հա:

Հանրապետությունում ցորենի արտադրության ծավալները չեն կարող բավարարել ներքին պահանջարկը, և Հայաստանը ցորեն է ներմուծում:

[19] Աղբյուրը՝ Պարենային ապահովություն և աղքատություն, 2013 թ. հունվար-հունիս, ՀՀ վիճակագրական կոմիտե, էջ 35, Պարենային ապահովություն և աղքատություն, 2016 թ. հունվար-հունիս, ՀՀ վիճակագրական կոմիտե, էջ 35, Պարենային ապահովություն և աղքատություն, 2024 թ. հունվար-հունիս, ՀՀ վիճակագրական կոմիտե, էջ 34: Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները և համախառն բերքը, 2010 թ.:

2010–2023 թթ. ընթացքում ցորենի ներմուծման ծավալները տատանվել են 323–502 հազ. տոննայի միջակայքում, սակայն դիտարկվող ողջ ժամանակահատվածում ներմուծումն աճել է, և միջին տարեկան աճը կազմում է 1.9%:

Ցորենի ներմուծման դիտարկված ծավալներն ապահովել են հանրապետության ցորենի ամբողջական առաջարկի, միջին հաշվով, 40%-ը, իսկ առանձին տարիներին այս ցուցանիշը տատանվել է 25–52%-ի միջակայքում:



Գծապատկեր 1. ***Ցորենի տարեսկզբի պահուստները, արտադրության և ներմուծման ծավալները, ամբողջական առաջարկը ՀՀ-ում 2010–2023 թթ., հազ. տոննա***[20]

Ցորենի ամբողջական առաջարկը 2010–2016 թթ. ընթացքում անընդհատ աճել է՝ 701.1 հազ. տոննայից հասնելով մինչև 1257.3 հազ. տոննայի, որից հետո սկսել է նվազել՝ 2021 թ. հասնելով մինչև 791.3 հազ. տոննայի: Դրանից հետո՝ 2022–2023 թթ., նորից սկսել է աճել և 2023 թ. կազմել է 952.3 հազ. տոննա:

Ամբողջական առաջարկի փոփոխությունները պայմանավորող էական բաղադրիչ է նաև ցորենի տարեսկզբի պահուստը, որն առանձին տարիներին ապահովել է հանրապետության ցորենի ամբողջական առաջարկի մինչև 50%-ը:

Ցորենի կիրառությունը, համաձայն ՀՀ պարենային հաշվեկշռի, ենթադրում է վերջինիս օգտագործումը որպես սննդամթերք, անասնակեր, սերմացու, ինչպես նաև կորուստներն ու արտահանումը: Բնականաբար, ցորենի օգտագործման ամենահիմնական մասը որպես սննդամթերք դրա օգտագործման ծավալներն են:

Դիտարկվող ժամանակահատվածում որպես սննդամթերք ցորենի օգտագործման ծավալները նվազման միտում են ունեցել, մասնավորապես՝ 2023 թ., 2010 թ. համեմատությամբ, 12%-ով կամ տարեկան, միջին հաշվով, 4,1 հազ. տոննայով:

[20] Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների բազա, https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank_7%20Food%20Security/FS-1-2023.px/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb



Գծապատկեր 2. ***Որպես սննդամթերք ցորենի օգտագործման ծավալները ՀՀ-ում 2010–2023 թթ.***[21]

Որպես սննդամթերք՝ 2021 թ. հանրապետությունում սպառվել է 76.6 հազ. տոննայով ավելի պակաս ցորեն, քան 2010 թ.: 2022–2023 թթ. սպառման ծավալները նորից սկսել են աճել:

Դիտարկվող ժամանակահատվածում նվազել է նաև որպես սննդամթերք ցորենի սպառման մասնաբաժինը ընդամենը օգտագործման մեջ: Եթե 2010 թ. սննդամթերքի ձևով օգտագործվել է ցորենի ավելի քանի 60%-ը, ապա 2023 թ.՝ միայն 40%-ը:



Գծապատկեր 3. ***Ցորենի օգտագործումը որպես սերմացու, անասնակեր և արտահանման նպատակով 2010–2023 թթ.***[22]

Ցորենի օգտագործման մյուս կարևոր ուղղությունը որպես անասնակեր վերջինիս օգտագործումն է: Դիտարկվող ժամանակահատվածում որպես անասնակեր ցորենի օգտագործման ծավալներն ավելացել են. միջին տարեկան աճը՝ 4.32 հազ. տոննա:

[21] Նույն աղբյուրը:
[22] Նույն աղբյուրը:

Եթե 2010–2011 թթ. որպես անասնակեր օգտագործվել է, միջին հաշվով, շուրջ 63 հազ. տոննա ցորեն, ապա ժամանակաշրջանի վերջում՝ 2023 թ.՝ 117.3 հազ. տոննա: Որպես անասնակեր օգտագործված ցորենի մասնաբաժինը ընդամենը օգտագործման մեջ 2010–2023 թթ. կազմել է միջինում 10.3%:

Թեև ժամանակաշրջանի սկզբի և վերջի սերմացու ցորենի օգտագործման ծավալները գրեթե նույնն են՝ շուրջ 21.0 հազ. տոննա, սակայն ընթացքում դրանք էական տատանումների են ենթարկվել: Որպես սերմացու օգտագործված ցորենի առավելագույն ծավալը արձանագրվել է 2015-ին՝ 32.7 հազ. տոննա, իսկ հանրապետության ընդհանուր օգտագործված ցորենի ծավալի մեջ որպես սերմացու օգտագործված մասնաբաժինը միջինում 2.4% է:

Դիտարկվող ժամանակահատվածում, ոչ մեծ ծավալներով ցորեն, հանրապետությունից նաև արտահանվել է, որն իր առավելագույն մեծությանն է հասել 2017 թ.՝ 19.2 հազ. տոննա, որից հետո արտահանման ծավալները սկսել են նվազել՝ 2023 թ. հասելով ընդամենը 4.4 հազար տոննայի:



Գծապատկեր 4. ***Ցորենի կորուստների շարժընթացը 2010–2023 թթ.***[23]

Ցորենի կորուստների ծավալներն ուսումնասիրվող ժամանակահատվածում տարեցտարի ավելացել են, մասնավորապես՝ 2023 թ., 2010 թ. համեմատությամբ, ավելացել են 35,1 հազ. տոննայով կամ աճել են 4.34 անգամ: Հատկանշական է, որ ոչ միանշանակ վարքագիծ է դրսևորել արտադրության նկատմամբ կորուստների շարժընթացը. 2023 թ., 2010 թ. համեմատությամբ, ցորենի կորուստների տեսակարար կշիռը արտադրության մեջ աճել է 19.9 տոկոսային կետով: Կարելի է նկատել նաև, որ թեպետ 2017 թ. և հետագա տարիներին դիտվել է կորուստների ծավալների նվազում բացարձակ արտահայտությամբ, սակայն կորուստների մասնաբաժինը արտադրությունում աճել է, և ուսումնասիրվող ժամանակահատվածում ամենաբարձր մակարդակն արձանագրվել է 2019 թ.՝ 43.5%:

Հարկ է նշել, որ կորուստների չափը կախված է իրացման և պահեստավորման ոչ կատարյալ համակարգերի առկայությունից: Ըստ էության, կորուստներին վերաբերում է հացահատիկի այն ծավալը, որը բեռնափոխադրման և պահեստավորման բոլոր փուլերում՝ արտադրությունից (բերքահավաքից հետո), վերամշակումից և պահեստավորումից մինչև սպառում, ոչնչանում է կամ պիտանի չէ օգտագործման համար:

[23] Նույն աղբյուրը:



Գծապատկեր 5. ***Ցորենի պահուստները 2010–2023 թթ. ՀՀ-ում, տարեվերջին***[24]

ՀՀ-ում 2023 թվականին, 2010 թ. համեմատությամբ, ցորենի պահուստների ծավալները կրկնակի ավելացել են, ընդ որում, դիտարկվող ժամանակահատվածում՝ մինչև 2016 թվականը, դրսևորվել է աճի միտում: Նշված ժամանակահատվածում ամենաբարձր մակարդակներն արձանագրվել են 2015 և 2016 թվականներին, ինչը պայմանավորված է եղել բերքատվության ցուցանիշի բարձր մակարդակով՝ կազմելով համապատասխանաբար՝ 33.4 և 32.4 ցենտներ:



Գծապատկեր 6. ***Ցորենի ներմուծումից կախվածությունն ու ներմուծման մասնաբաժինն ամբողջական առաջարկում ՀՀ-ում 2010–2023 թթ., հազ. տոննա***[25]

ՀՀ-ում ցորենի ներմուծման ծավալները մշտապես զգալիորեն գերազանցել են արտադրության ծավալները՝ որոշ տարիներին նույնիսկ 3 և ավելի անգամ: Ցորենի ներմուծումից կախվածության աստիճանը ուսումնասիրվող ժամանակահատվածում տատանվել է 49.2–79.0% սահմաններում, ընդ որում՝ եթե 2010–2016 թթ. այդ կախվածությունը նվազել է, ապա 2017 թվականից հետո նորից սկսել է աճել և 2023 թվականին հասել է 72.8%-ի:

Ներմուծումից կախվածության աճին զուգահեռ, ցորենի արտադրության մասնաբաժինը ամբողջական առաջարկի մեջ տարեցտարի նվազել է, ինչը

[24] Նույն աղբյուրը:
[25] Նույն աղբյուրը:

պարենային անվտանգության էական սպառնալիք է, քանի որ արտադրության ծավալների նվազումը հանգեցնում է ցորենի ինքնաբավության մակարդակի նվազման:



Գծապատկեր 7. ***Ցորենի ինքնաբավության մակարդակն ու արտադրության մասնաբաժինն ամբողջական առաջարկում ՀՀ-ում 2010–2023 թթ., %*** [26]

Դիտարկվող ժամանակահատվածում ցորենի ինքնաբավության մակարդակը Հայաստանում բավականին ցածր է: Այսպես՝ եթե 2010 թ. այս ցուցանիշը կազմել է 33.5%, հետագա տարիներին նկատելի էր շարունակական աճի միտում, և 2016 թվականին հասել է 53.2%-ի, ապա 2016 թվականից սկսած նորից սկսել է նվազել, և 2023 թվականին հանրապետությունում արտադրված ցորենի ինքնաբավության մակարդակը կազմել է 27.9%: 2023 թ., 2016 թ. համեմատությամբ, ցորենի ինքնաբավության մակարդակը նվազել է 25.3 տոկոսային կետով:

Հայաստանը հիմնականում ցորեն ներկրում է Ռուսաստանից: Ուսումնասիրվող ժամանակահատվածում Ռուսաստանից ներկրված հացահատիկի մասնաբաժինը ներմուծման կառուցվածքում տատանվել է 83.6–97.6 տոկոսի սահմաններում:



Գծապատկեր 8. ***Ցորենի ներմուծման կառուցվածքը ՀՀ-ում 2010–2022 թթ., %***[27]

[26] Նույն աղբյուրը:

[27] Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2012, 2015, 2017 թթ. (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 2-նիշ դասակարգման), ՀՀ վիճակագրական կոմիտեի կայքէջ, https://armstat.am/am/?nid=766

Բացառություն է կազմել 2011 թ-ը, երբ ներմուծման կառուցվածքում Ռուսաստանից ներկրված հացահատիկի մասնաբաժինը 49.3 տոկոս էր: Դա պայմանավորված է եղել Ուկրաինայից և Ղազախստանից ցորենի ներկրման բարձր մակարդակով, համապատասխանաբար՝ 94014.3 և 84262.3 տոննա: 2022 թ., 2010 թ. համեմատությամբ, հիմնական գործընկեր ՌԴ-ից ներմուծված հացահատիկի ծավալների տեսակարար կշիռն աճել է 12,8 տոկոսային կետով, իսկ նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 1 տոկոսային կետով:

Բուսական յուղ: Պարենային հաշվեկշռում բուսական յուղը ներառում է սոյայի, գետնընկույզի, ձիթապտղի, արմավենու, արևաձաղկի և ձեթերի այլ տեսակների վերաբերյալ տվյալներ:

2010–2021 թթ. ընթացքում ՀՀ-ում բուսական յուղի պահանջարկը գրեթե 100%-ով բավարարվել է ներմուծման հաշվին: Թեև դիտարկվող ժամանակահատվածում հանրապետությունում բուսական յուղ արտադրվել է մինչև 2021 թ., այդուհանդերձ, արտադրության ծավալների որոշակի աճ արձանագրվել է միայն 2012 և 2013 թթ., որից հետո, շարունակական նվազման հետևանքով, 2022–2023 թթ. ցուցանիշը հավասարվել է 0-ի, և ներքին պահանջարկը բավարարվել է բացառապես ներմուծման հաշվին:



Գծապատկեր 9. ***ՀՀ-ում բուսական յուղի տարեսկզբի պահուստները, արտադրության և ներմուծման ծավալները, ամբողջական առաջարկը 2010–2023 թթ., հազ. տոննա*** [28]

Գծապատկեր 9-ից նկատելի է, որ դիտարկվող ժամանակահատվածում Հայաստանում բուսական յուղի արտադրության առավելագույն մակարդակը՝ 4.7 հազար տոննա, ապահովվել է 2013 թվականին:

Ներմուծման ծավալները դիտարկվող ժամանակահատվածում առանձին տարիներին ընդհատումներով (2015 և 2021 թթ.) հիմնականում աճի միտում են ունեցել, և 2023 թ. հանրապետություն ներմուծվել է 33.9 հազ. տոննա բուսական յուղ, ինչը շուրջ 20 հազ. տոննայով կամ 60%-ով ավելի է 2010 թ. ցուցանիշից:

[28] Աղբյուրը՝ Պարենային ապահովություն և աղքատություն, ՀՀ վիճ. կոմիտեի կայքէջ, https://armstat.am/am/?nid=81&pthid=pov&year=2024&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC, https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank_7%20Food%20Security/FS-1-2023.px/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb



Գծապատկեր 10. ***Արևածաղկի մշակման ցանքատարածությունը և միջին բերքատվությունը ՀՀ-ում 2016–2023 թթ.***[29]

Թե՛ Հայաստանում արտադրված և թե՛ ներմուծված բուսական յուղի բոլոր տեսակների մեջ առյուծի բաժինն ապահովում է արևածաղկի բուսական յուղը՝ շուրջ 95%: Արևածաղկի յուղի արտադրության ծավալների նվազմանը զուգահեռ, ՀՀ-ում արևածաղկի մշակման ցանքատարածությունները ևս նվազել են, նվազել է նաև 1 հա ցանքատարածության միջին բերքատվությունը: 2016–2023 թթ. շարժընթացը ցույց է տալիս, որ արևածաղկի մշակման ցանքատարածությունների մակերեսը հանրապետությունում, դիտարկվող ժամանակահատվածում, կրճատվել է 90%-ով: Վերջին 4 տարիների ընթացքում կրճատվել է նաև 1 հա ցանքատարածության բերքատվությունը՝ 30.3 g/h-ից հասնելով մինչև 24.0 g/h-ի:



Գծապատկեր 11. ***Բուսական յուղի ինքնաբավության և ներմուծումից կախվածության մակարդակները ՀՀ-ում 2010–2023 թթ., %***[30]

---

[29] Աղբյուրը՝ Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները և համախառն բերքը, ՀՀ վիճակագրական կոմիտեի կայքէջ, https://armstat.am/am/?nid=81&pthid=agr&year=&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC

[30] Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների բազա, https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank_7%20Food%20Security/FS-1-2023.px/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb, և հեղինակների հաշվարկներ:

Բուսական յուղի տարեսկզբի պահուստները դիտարկվող ամբողջ ժամանակահատվածում տատանվել են 2.0–4.5 հազ. տոննայի սահմաններում, բացառություն է կազմում միայն 2023 թ., երբ հանրապետության բուսական յուղի տարեսկզբի պահուստը կազմել է 8.7 հազ. տոննա, նախորդ տարվա նկատմամբ աճելով շուրջ 2.5 անգամ:

Դիտարկվող ժամանակահատվածում բուսական յուղի արտադրության ծավալների անկումը հանգեցրել է ինքնաբավության մակարդակի նվազման և ներմուծումից 100% կախվածության: 2022 թվականին ներմուծումից կախվածությունը գերազանցել է 100%-ը, քանի որ հանրապետությունից 0,6 հազար տոննա բուսական յուղ է արտահանվել ՌԴ, Ֆրանսիա, Վրաստան, Իրաք, Բելգիա և ԱՄՆ:

ՀՀ-ից արտահանված արևածաղկի բուսայուղի կեսից ավելին արտահանվել է Ֆրանսիա, 21%-ը՝ Վրաստան, 11.5-ական %-ը՝ Իրաք և ԱՄՆ, 2.2 և 0.8%-ը՝ համապատասխանաբար՝ Բելգիա և ՌԴ: Հատկանշական է, որ 2023 թվականին ՀՀ-ից ձեթ արտահանվել է 1 տոննա, ամբողջը՝ դեպի ՌԴ:



Գծապատկեր 12. ***ՀՀ-ից արևածաղկի բուսական յուղի[31] արտահանման կառուցվածքը՝ ըստ երկրների, 2022 թ., %[32]***

2023 թվականին ՀՀ ներմուծվել է 30.4 հազ. տոննա արևածաղկի բուսական յուղ, որի 97.5%-ը՝ ՌԴ-ից[33]: Եթե 2019, 2020 և 2021 թվականներին հանրապետություն արևածաղկի բուսական յուղի ներմուծման երկրորդ գործընկեր պետությունը Ուկրաինան էր, ապա 2022-ին Ուկրաինայից արևածաղկի բուսական յուղ չի ներմուծվել, իսկ 2023 թ. ներմուծվել է ընդամենը 25 տոննա: Կրճատվել են նաև Վրաստանից ներմուծման ծավալները: Արևածաղկի բուսական յուղ սկսել է ներմուծվել Կուրասաուից, Չինաստանից, Բելգիայից և Թուրքիայից:

[31] ԱՏԳ ԱԱ քառանիշ դասակարգմամբ 1512 ծածկագրով դասվող ապրանքախումբ: Այսուհետ կանդրադառնանք այս ապրանքախմբին, քանի որ ՀՀ ներկրկվող բուսայուղի գրեթե 98%-ը պատկանում է այս ապրանքախմբին:

[32] Աղբյուրը՝ https://www.trademap.org/Country_SelProductCountry_TS.aspx?nvpm=1%7c051%7c%7c%7c%7c1512%7c%7c%7c4%7c1%7c1%7c2%7c2%7c1%7c2%7c2%7c1%7c1

[33] Նույն աղբյուրը:



Գծապատկեր 13. ***Արևածաղկի ձեթի ներմուծման կառուցվածքն ըստ երկրների, 2018 թ., %***



Գծապատկեր 14. ***Արևածաղկի ձեթի ներմուծման կառուցվածքն ըստ երկրների, 2023 թ., %***

Ինչ վերաբերում է բուսական յուղի օգտագործմանը, ապա հիմնական ուղղությունը սննդի տեսքով օգտագործումն է: Հանրապետությունում տարեկան, միջին հաշվով, սպառվում է 28.0 հազ. տոննա բուսական յուղ, որը կազմում է ընդհանուր օգտագործման, միջին հաշվով, 85–90%-ը՝ դիտարկվող ժամանակահատվածի համար: Օգտագործման մյուս ուղղությունները՝ կորուստներ և արտահանում, աննշան են և չեն գերազանցում բուսական յուղի օգտագործման ընդհանուր ծավալների 1–2%-ը:



Գծապատկեր 15. ***Բուսայուղի տարեկան կորուստները ՀՀ-ում 2010–2023 թթ.***[34]

2013 թվականից սկսած՝ ՀՀ-ում արտադրության նկատմամբ բուսայուղի կորուստները շարունակ աճել են: Նշանակալի կրճատում արձանագրվել է 2021 թվականին, որը սակայն չի պահպանվել, և չնայած վերջին 2 տարիներին հանրապետությունում բուսայուղ չի արտադրվել, սակայն դրա կորուստը 3 և ապա 2 անգամ աճել է՝ 0.1 հազ. տոննայից դառնալով 0.6 հազար տոննա:

Վերջին երկու տարիների ընթացքում աճել են բուսայուղի տարեվերջի պահուստները՝ պայմանավորված 2022 թ., նախորդ տարվա համեմատու-

[34] Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների բազա, https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank_7%20Food%20Security/FS-1-2023.px/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb, և հեղինակների հաշվարկներ:

թյամբ, բուսայուղի ներմուծման 24.2% աճով և բնակչության կողմից սննդում բուսայուղի օգտագործման ծավալների կրճատմամբ. արդյունքում՝ 2023 թ. հանրապետությունում բուսայուղի պահուստները հասել են առավելագույն՝ 12.7 հազ. տոննա մակարդակի, թեև 2023 թ. ներմուծումը կրճատվել է, իսկ սննդի օգտագործման ծավալներն աճել են: Չնայած վերջին երկու տարիների տարեվերջյան պահուստների աճին՝ դրանք կազմել են սննդի օգտագործման համար սպառման ընդամենը 30.7 և 43.3%-ը, իսկ 2010–2021 թթ. այդ ցուցանիշի միջինը կազմել է 9.4%: Բուսայուղի տարեսկզբի պահուստների մեծությունը ցույց է տալիս, որ ներմուծման բացակայության դեպքում 2022 թ. դա ՀՀ բնակչությանը կբավականացներ ընդամենը 40 օր, իսկ 2023 թվականին՝ 101 օր[35]:



Գծապատկեր 16. ***ՀՀ-ում բուսական յուղի պահուստները 2010–2023 թթ.***[36]

Շաքարավազ: Վերջին 14 տարիների ընթացքում ՀՀ-ում շաքարի արտադրության առավելագույն ցուցանիշը՝ 89.2 հազ. տոննա, գրանցվել է 2014 թ., որը, սակայն, աստիճանաբար նվազել է՝ 2023 թ. հասնելով դիտարկվող ժամանակահատվածի նվազագույն արժեքին՝ ընդամենը 29.9 հազ. տոննայի:

ՀՀ-ում շաքար արտադրվում է ներմուծված շաքարեղեգի հումքից, կամ ներմուծված շաքարը փաթեթավորվում է: Գծապատկեր 17-ից երևում է, որ դիտարկվող ողջ ժամանակահատվածում շաքարավազի արտադրությունը գերազանցել է ներմուծումը. բացառություն են կազմում 2010, 2020, 2021 և 2023 թվականները:

[35] Ըստ տարեսկզբի դրությամբ ՀՀ մշտական բնակչության թվաքանակի, 1 շնչի հաշվով օրական սպառման ցուցանիշի և հեղինակների հաշվարկների:

[36] Աղբյուրը՝ Պարենային ապահովություն և աղքատություն, ՀՀ վիճակագրական կոմիտեի կայքէջ, https://armstat.am/am/?nid=81&pthid=pov&year=2024&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC



Գծապատկեր 17. ***Շաքարի տարեսկզբի պահուստների, արտադրության և ներմուծման ծավալները, ամբողջական առաջարկը ՀՀ-ում 2010–2023 թթ., հազ. տոննա***[37]

Եթե դիտարկենք նույն ժամանակահատվածում շաքարեղեգի ներմուծման տվյալները, ապա կտեսնենք, որ 2020, 2021 և 2023 թթ., նախորդ տարիների համեմատությամբ, շաքարեղեգի ներմուծումը կրճատվել է համապատասխանաբար՝ 13%, 11.5% և 54.6%-ով, իսկ պատրաստի շաքարավազի ներմուծումը նույն տարիներին աճել է համապատասխանաբար՝ 128%, 8.6% և 548%-ով:



Գծապատկեր 18. ***Շաքարի***[38] ***և շաքարեղեգի***[39] ***ներմուծումը 2010–2023 թթ.***[40]

---

[37] Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների բազա, https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank_7%20Food%20Security/FS-1-2023.px/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb, https://www.trademap.org/Country_SelProductCountry_TS.aspx?nvpm=1%7c051%7c%7c%7c%7c1701991001%7c%7c%7c8%7c1%7c1%7c1%7c2%7c1%7c2%7c2%7c1%7c1 տվյալների:

[38] ԱՏԳ ԱԱ 1701991001 և 1701991009 ստորաենթադիրքերում ընդգրկված սպիտակ շաքար:

[39] ԱՏԳ ԱԱ 1701 13 կամ 1701 14 ենթադիրքերում ընդգրկված եղեգնաշաքարի հումք:

[40] Աղբյուրը՝ https://www.trademap.org/Country_SelProductCountry_TS.aspx?nvpm= 1%7c051%7c%7c%7c%7c1701991001%7c%7c%7c8%7c1%7c1%7c1%7c2%7c1%7c2%7c2%7c1%7c1

Ինչ վերաբերում է շաքարավազի տարեսկզբի պահուստներին, ապա դրանց ծավալները դիտարկվող ժամանակահատվածում առավել տատանողական վարքագիծ են ունեցել. 2014 թ. արձանագրվել է պահուստների նվազագույն մակարդակը՝ 2.3 հազ. տոննա, իսկ 2018 թ-ից սկսվել է կայուն աճի միտումը, և 2020–2023 թթ. տարեսկզբի պահուստները կազմել են միջինը 30.0 հազ. տոննա:

Եթե 2018 թ. ՀՀ ներմուծվող շաքարավազի գրեթե 75%-ը Ուկրաինայից էր, ապա 2023-ին Ուկրաինայից շաքարավազ առհասարակ չի ներմուծվել. շաքարավազի 97%-ը՝ 35.2 հազար տոննա, ներմուծվել է ՌԴ-ից, 2%-ը՝ Բելառուսից:



Գծապատկեր 19. ***Սպիտակ շաքարի ներմուծման կառուցվածքն ըստ երկրների, 2018 թ.***[41]



Գծապատկեր 20. ***Սպիտակ շաքարի ներմուծման կառուցվածքն ըստ երկրների, 2023 թ.***



Գծապատկեր 21. ***Եղեգնաշաքարի հումքի ներմուծման կառուցվածքն ըստ երկրների, 2018 թ.***[42]



Գծապատկեր 22. ***Եղեգնաշաքարի հումքի ներմուծման կառուցվածքն ըստ երկրների, 2023 թ.***

Եղեգնաշաքարի հումքի ներմուծման աշխարհագրությունը նույն ժամանակահատվածում փոփոխության չի ենթարկվել. գրեթե ամբողջությամբ ներմուծվում է Բրազիլիայից: ՌԴ-ից 2018 թ. ներմուծվել է ընդամենը 13, իսկ 2023 թ.՝ 20 տոննա եղեգնաշաքարի հումք[43]:

---

[41] Նույն աղբյուրը:
[42] Նույն աղբյուրը:
[43] Նույն աղբյուրը:

Հանրապետությունում շաքարավազի օգտագործման ամենամեծ ուղղությունը սննդի մեջ օգտագործումն է, որը կազմում է ընդհանուր օգտագործման, միջին հաշվով, 80%-ը:



Գծապատկեր 23. ***Շաքարավազի օգտագործումը ՀՀ-ում 2010–2023 թթ., հազ. տոննա***[44]

2010–2014 թթ. սննդում օգտագործված շաքարավազը կազմում է տարեկան միջինը 80 հազ. տոննա, 2015–2016 թթ. այս ցուցանիշը կրճատվել է՝ հասնելով տարեկան մոտ 61 հազ. տոննայի: 2023 թ. ցուցանիշը կազմել է 69.5 հազար տոննա, որը, 2010 թ. համեմատությամբ, մոտ 14%-ով պակաս է:

Շաքարավազի կորուստները դիտարկվող ժամանակահատվածի ընթացքում փոքր են և տատանվել են տարեկան 1.1–1.7 հազ. տոննայի շրջանակներում:



Գծապատկեր 24. ***Շաքարավազի տարեկան կորուստները ՀՀ-ում 2010-2023 թթ.***[45]

[44] Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների բազա, https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank_7%20Food%20Security/FS-1-2023.px/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb, և հեղինակների հաշվարկների:

[45] Նույն աղբյուրը:

Գծապատկեր 24-ից երևում է, որ շաքարավազի տարեկան կորուստները, 2016 թ. սկսած, հանրապետությունում աճել են: 2021 թ. կրճատմանը հաջորդել են կրկին աճը և անկումը, սակայն ցուցանիշը շարունակում է բարձր մնալ 2016 թ. ցուցանիշից: 2020–2021 թթ. արտադրության համեմատությամբ կորուստներն ամենամեծն են եղել դիտարկվող ժամանակաշրջանում: Չնայած 2022 թ. անկմանը՝ 2023 թ. արտադրության նկատմամբ կորուստները կրկին աճել են՝ գերազանցելով 2010 թ. ցուցանիշը:

Դիտարկվող ողջ ժամանակահատվածում Հայաստանից շաքարավազ նաև արտահանվել է, իհարկե, ոչ մեծ ծավալներով: Վերջին 15 տարիների ընթացքում ամենաշատը շաքարավազ է արտահանվել 2021–2023 թթ., համապատասխանաբար՝ 7.7, 5.0 և 4.5 հազ. տոննա: 2010–2020 թթ. շաքարավազի արտահանման ծավալներն ավելի փոքր են եղել և տատանվել են միջինը 2.0-3.0 հազ. տոննայի շրջանակներում: ՀՀ-ից շաքարավազ է արտահանվել ԱՄՆ, ՌԴ և Վրաստան:

Վերջին 4 տարիների ընթացքում ՀՀ-ից աճել է նաև եղեգնաշաքարի հումքի արտահանումը. 2020 թ. 70 տոննա եղեգնաշաքարի հումք է արտահանվել ՌԴ, 2021 թ. 177 տոննա արտահանվել է ՌԴ, իսկ 10 տոննա՝ Վրաստան, 2022 թ. 576 տոննա՝ ՌԴ, 40 տոննա՝ Վրաստան, իսկ 2023 թ. 581 տոննա՝ ՌԴ:

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թ. մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին պայմանագրի և ՀՀ Կառավարության 2007 թվականի ապրիլի 12-ի թիվ 546-Ն որոշման համաձայն՝ շաքարի արտադրության համար ՀՀ ներմուծվող եղեգնաշաքարի հումքը մինչև 2025 թվականը ազատված է ներմուծման մաքսատուրքից: Քանի որ 2025 թվականից հետո եղեգնաշաքարի հումքի 1 տոննա ներմուծման համար մաքսատուրքը կդառնա միջինը 250 ԱՄՆ դոլար, ուստի կարելի է ենթադրել, որ երրորդ երկրներից ներմուծվող շաքարեղեգի գնի թանկացումը կհանգեցնի շաքարի գնի թանկացման:



Գծապատկեր 25. ***ՀՀ-ում սպիտակ շաքարի պահուստները 2010–2023 թթ.***[46]

[46] Աղբյուրը՝ Պարենային ապահովություն և աղքատություն, ՀՀ վիճակագրական կոմիտեի կայքէջ, https://armstat.am/am/?nid=81&pthid=pov&year=2024&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC

Չնայած 2020–2021 թթ. և 2023 թ. աննշան կրճատումներին՝ 2017 թ-ից սկսած, հանրապետությունում շաքարի պահուստները էականորեն աճել են՝ 2023 թ. հասնելով 30.9 հազար տոննայի, որը 1.5 անգամ գերազանցում է 2010 թ. ցուցանիշը: Չնայած դրան՝ օգտագործման համար անհրաժեշտ պահուստի մեծությունը փոքր է. 2018–2023 թթ. այդ ցուցանիշը կազմել է միջինը 42%: 2023 թ. տարեսկզբի դրությամբ ՀՀ մշտական բնակչության թվի և շաքարավազի պահուստների, ինչպես նաև մեկ շնչի հաշվով ՀՀ-ում շաքարավազի օրական սպառման ծավալների վերաբերյալ տվյալներով, ներմուծման բացակայության պայմաններում, 2023 թ. շաքարավազը կբավականացներ ընդամենը 158 օր:

Շաքարավազի ինքնաբավության աստիճանը դիտարկվող ժամանակահատվածում տատանվել է բավական մեծ միջակայքում. եթե 2011–2016 թթ. բարձր է 90%-ից, ապա 2017 թ-ից սկսել է ոչ համաչափ նվազման միտում, որը շարունակվել է մինչև 2021 թ.՝ 33.9%:



Գծապատկեր 26. ***Շաքարավազի ինքնաբավության և ներմուծումից կախվածության մակարդակները ՀՀ-ում 2010–2023 թթ., %***[47]

Եթե 2021 թ. շաքարի ներքին պահանջարկը 34%-ով էր բավարարվում արտադրության հաշվին, ապա 2022 թ.՝ 91.2%-ով, իսկ 2023 թ.՝ 43%-ով: Ինքնաբավության մակարդակի և ներմուծումից կախվածության նման կտրուկ տատանումները, հատկապես 2019–2023 թթ., պայմանավորված են արտադրության ծավալների նույնպիսի մեծ տատանումներով, որն էլ, իր հերթին, պայմանավորված է եղեգնաշաքարի միջազգային գների տատանումներով: Իսկ եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ ՀՀ-ում եղեգնաշաքար չի արտադրվում, ապա մեր հանրապետությունում շաքարավազի ներմուծումից փաստացի կախվածությունը 100% է

Խոզի միս: Խոզի միսը պարենային հաշվեկշռում հաշվառվում է սպանդային քաշով խոզի մսի, ինչպես նաև երշիկեղենի, պահածոյացված մսի և այլ մսամթերքի տվյալներով՝ վերածած սպանդային քաշով խոզի մսի:

[47] Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների բազա, https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank_7%20Food%20Security/FS-1-2023.px/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb, և հեղինակների հաշվարկներ:



Գծապատկեր 27. ***Խոզի մսի տարեսկզբի պահուստները, արտադրության և ներմուծման ծավալները, ամբողջական առաջարկը ՀՀ-ում, 2010–2023 թթ.***[48]

Խոզի մսի թե՛ արտադրության և թե՛ ներմուծման ծավալները դիտարկվող ժամանակահատվածում աճել են: Սակայն, ի տարբերություն, օրինակ՝ տավարի մսի, խոզի մսի ներքին պահանջարկի ավելի մեծ մասն է բավարարվում ներմուծման հաշվին:

Հանրապետությունում խոզի մսի արտադրության ծավալները դիտարկվող ժամանակահատվածում տատանվել են 8.0–17.0 հազ. տոննայի միջակայքում, և եթե 2010–2016 թթ. արտադրության ծավալները շարունակ աճել են, ապա 2017–2023 թթ.՝ անընդհատ նվազել: 2023 թ. արտադրվել է 15.1 հազ. տոննա խոզի միս, ինչը գրեթե 2 անգամ ավելի է 2010 թ. արտադրության ցուցանիշից:

Խոզի մսի ներմուծման ծավալների տատանողականությունը 2010–2023 թթ. ավելի մեծ է. 10.0–20.0 հազ. տոննայի սահմաններում է: Դիտարկվող ժամանակահատվածի սկզբին՝ 2010–2013 թթ., և վերջին՝ 2020, 2022–2023 թթ., ներմուծման ծավալները գերազանցել են արտադրության ցուցանիշը: 2023 թ. ներմուծվել է 16.8 հազ. տոննա խոզի միս, ինչը, 2010 թ. համեմատությամբ, ավելի է շուրջ 50%-ով:

Ինչ վերաբերում է խոզի մսի տարեսկզբի պահուստներին, ապա դիտարկվող ժամանակահատվածում դրանք կազմել են 0.1–0.2 հազ. տոննա, այսինքն՝ խոզի մսի ամբողջական առաջարկի մեծ մասն օգտագործվում է, որի հիմնական ուղղությունը սննդամթերքի տեսքով օգտագործումն է:

[48] Աղբյուրը՝ ՀՀ ազգային պարենային հաշվեկշիռներն ըստ պարենային ապրանքատեսակների ցուցանիշների և տարիների, ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների բազա, https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank_7%20Food%20Security/FS-1-2022.px/table/tableViewLayout2/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb



Գծապատկեր 28. ***Խոզի մսի օգտագործումը ՀՀ-ում 2010–2023 թթ.***[49]

Գծապատկեր 28-ից երևում է, որ դիտարկվող ժամանակահատվածում խոզի մսի սպառման ծավալները զգալիորեն աճել են. 2010 թ. համեմատությամբ 2023 թ. հանրապետությունում սպառվում է շուրջ 65%-ով ավելի շատ խոզի միս:

Խոզի մսի կորուստները, արտահանումն ու տարեվերջի մնացորդի հանրագումարը դիտարկվող ժամանակահատվածում կազմում են ընդհանուր օգտագործման 2–3%-ը կամ տարեկան 0.4–1.0 հազ. տոննա:

Խոզի մսի ինքնաբավության մակարդակը բավական ցածր է և դիտարկվող ժամանակահատվածում տատանողական վարքագիծ է դրսևորել 38–64%-ի միջակայքում:



Գծապատկեր 29. ***Խոզի մսի ինքնաբավության և ներմուծումից կախվածության մակարդակները ՀՀ-ում 2010–2023 թթ., %***[50]

[49] Նույն աղբյուրը:
[50] Նույն աղբյուրը և հեղինակների հաշվարկները:

2010–2012 թթ. խոզի մսի ինքնաբավության մակարդակի նվազման միտումներին հաջորդել է 2013–2016 թթ. աճի միտումը՝ 2016 թ. հասնելով ամենաբարձր՝ 64.1%-ի, որից հետո կրկին սկսել է նվազել և 2020 թ. կտրուկ անկում գրանցել՝ կազմելով 45.1%: 2023 թ. ինքնաբավության մակարդակը եղել է 48%:

Ներմուծման բավական մեծ ծավալները հանգեցրել են ներմուծումից խոզի մսի կախվածության բավական բարձր աստիճանի՝ դիտարկվող ժամանակահատվածում տատանվելով 37–63%-ի միջակայքում:



ա) 2016 թ. *բ) 2023 թ.*

Գծապատկեր 30. ***Խոզի մսի ներմուծման ծավալն ըստ երկրների***[51]

Ուսումնասիրվող ժամանակահատվածում խոզի մսի ներմուծման աշխարհագրական կառուցվածքում նկատելի տեղաշարժեր են տեղի ունեցել: Այսպես՝ 2023 թ., նախորդ տարվա համեմատությամբ, 4 անգամ աճել է խոզի մսի ներմուծումը ԵԱՏՄ երկրներից՝ բացառապես Ռուսաստանից ներմուծման ծավալների աճի հաշվին: Այսպես՝ եթե 2016 թ. Ռուսաստանից խոզի մսի ներմուծումը կազմել է ընդամենը 2.5%, ապա 2023 թ. այդ ցուցանիշը 41% է: Ընդհանուր առմամբ, 2016 թ. խոզի միս ներկրվում էր ավելի մեծ թվով երկրներից, մինչդեռ 2023 թ. խոզի միս ներմուծվում էր հիմնականում երկու երկրից՝ Բրազիլիայից և Ռուսաստանից (գծապատկեր 30):

Թռչնամիս: Պարենային հաշվեկշռում թռչնամիսը հաշվառվում է սպանդային քաշով թռչնի մսի (հավ, աքլոր, հնդկահավ, բադ, սագ ու այլ ընտանի թռչուններ), ինչպես նաև երշիկեղենի, պահածոյացված մսի և այլ մսամթերքի տվյալներով՝ վերածած սպանդային քաշով թռչնի մսի:

Մսի բոլոր տեսակներից միայն թռչնամսի դեպքում է, որ հանրապետության պահանջարկի մեծ մասը բավարարվում է ներմուծման հաշվին: Թեև դիտարկվող ժամանակահատվածում թռչնամսի արտադրության ծավալում որոշակի աճի միտում է գրանցվել, այնուամենայնիվ, ներմուծման ծավալները բավական մեծ են, և 2023 թ. ներմուծման ծավալը շուրջ 3 անգամ գերազանցել է արտադրության ծավալը:

[51] Հաշվարկները կատարել են հեղինակները ՊԵԿ-ի տվյալների հիման վրա, https://www.src.am/am/customStatisticsPage?id=128&selected_type=9&selected_date=%D4%B8%D5%B6%D5%A9%D5%A1%D6%81%D5%AB%D5%AF



Գծապատկեր 31. ***Թռչնամսի տարեսկզբի պահուստները, արտադրության և ներմուծման ծավալները, ամբողջական առաջարկը ՀՀ-ում 2010–2023 թթ.***[52]

2010–2021 թթ. հանրապետությունում թռչնամսի արտադրության ծավալներն անընդհատ աճել են, և 2021 թ. արտադրվել է 14.6 հազ. տոննա թռչնամիս: Միջին տարեկան աճը նշված ժամանակահատվածում կազմել է 7.6%, իսկ կուտակային աճը՝ 260%: 2022–2023 թթ. թռչնամսի արտադրության ծավալները նվազել են համապատասխանաբար՝ 3.4%-ով և 2.1%-ով. 2023 թ. հանրապետությունում արտադրվել է 13.8 հազ. տոննա թռչնամիս: Դիտարկվող ժամանակահատվածում, արտադրության ծավալների աճին զուգընթաց, թռչնամսի ամբողջական առաջարկում արտադրության մասնաբաժինը 12%-ից հասել է 24%-ի, իսկ ներմուծման մասնաբաժինը 87%-ից նվազել է՝ հասնելով 71%-ի:

Թռչնամսի ներմուծման ծավալները դիտարկվող ժամանակահատվածում տատանվել են տարեկան 24.0–45.0 հազ. տոննայի սահմաններում, այդուհանդերձ, 2023 թ., 2010 թ. համեմատությամբ, ներմուծման ծավալները նույնպես աճել են՝ 7.8%-ով:

2020–2023 թթ. թռչնամսի տարեսկզբի պահուստները անփոփոխ են եղել՝ կազմելով 2.9 հազ. տոննա, իսկ մինչ այդ տատանվել են 0.1–0.6 հազ. տոննայի սահմաններում:

Ինչպես մսի մյուս տեսակների դեպքում, թռչնամսի օգտագործման ամենահիմնական ուղղությունը որպես սննդամթերք օգտագործումն է: Մինչև 2018 թ. սպառումը կազմել է թռչնամսի ընդամենը օգտագործման 98–99%-ը: 2019 թ. սկսած՝ սպառման մասնաբաժինը օգտագործման մեջ նվազել է մինչև 95%, քանի որ տարեվերջին պահուստներն ավելացել են շուրջ 5 անգամ, իսկ սպառման ծավալներն այդ ընթացքում ոչ միայն չեն նվազել, այլ նաև շարունակել են աճել:

[52] Աղբյուրը՝ ՀՀ ազգային պարենային հաշվեկշիռներն ըստ պարենային ապրանքատեսակների ցուցանիշների և տարիների, ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների բազա, https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank_7%20Food%20Security/FS-1-2022.px/table/tableViewLayout2/?rxd=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb



Գծապատկեր 32. ***Թռչնամսի օգտագործումը ՀՀ-ում 2010–2023 թթ.***[53]

Սպառման ծավալները դիտարկվող ժամանակահատվածում զգալիորեն աճել են, և ներկայում հանրապետությունում տարեկան սպառվում է շուրջ 55.0 հազ. տոննա թռչնամիս: 2023 թ., 2010 թ. համեմատությամբ, թռչնամսի սպառումն աճել է շուրջ 26%-ով:

Թռչնամսի կորուստները 2010–2023 թթ. փոքր են և տատանվել են 0.1–0.2 հազ. տոննայի սահմաններում: Գրեթե այդքան թռչնամիս էլ արտահանվել է հանրապետությունից դիտարկվող ժամանակահատվածում: Միայն 2022 թ. և 2023 թ. թռչնամսի արտահանման ծավալներն աճել են՝ կազմելով համապատասխանաբար՝ 0.5 և 0.9 հազ. տոննա:



Գծապատկեր 33. ***Թռչնամսի ինքնաբավությունն ու ներմուծումից կախվածությունը ՀՀ-ում 2010–2023 թթ.***[54]

[53] Նույն աղբյուրը:
[54] Նույն աղբյուրը և հեղինակների հաշվարկները:

Թռչնամսի ինքնաբավության մակարդակը ՀՀ-ում մտահոգիչ ցածր է. այն ամենացածրն է մսի մյուս տեսակների համեմատությամբ և 2023 թ. կազմել է 25.4%, որը չնչին չափով գերազանցում է նախորդ տարվա նույնանման ցուցանիշը (գծապատկեր 33): Հարկ է նշել, որ թռչնամսի ինքնաբավության բարձր մակարդակի ապահովումը առանձնակի կարևորություն ունի՝ հաշվի առնելով, որ թռչնամիսը Հայաստանում երկրորդ ամենամեծ սպառում ունեցող մսամթերքն է տավարի մսից հետո, և թռչնամսի նկատմամբ պահանջարկն աճման միտում ունի:

Թռչնամսի ներմուծումից մեծ կախվածության պայմաններում պարենային անվտանգության տեսանկյունից առանձնակի կարևորություն է ստանում ներմուծման աշխարհագրական կառուցվածքի ուսումնասիրությունը: Գծապատկեր 34-ից երևում է, որ 2023 թ. թռչնամսի ներմուծման ծավալները անհամեմատ մեծ են Ռուսաստանից, Ուկրաինայից և ԱՄՆ-ից: Կարելի է նկատել, որ 2016 թ. թռչնամսի և մսամթերքի ներմուծման կառուցվածքի հետ համեմատած՝ բավականին մեծ տեղաշարժեր են արձանագրվել: Այսպես՝ 2023 թ. ԱՄՆ-ի մասնաբաժինը ընդհանուր ներմուծման ծավալում կազմել է շուրջ 21%՝ 2016 թ. շուրջ 45%-ի փոխարեն, Ուկրաինայինը՝ մոտ 24%՝ 2016 թ. 16.1%-ի փոխարեն: 2023 թ. գրեթե 6 անգամ աճել են Ռուսաստանից թռչնամսի և մսամթերքի ներմուծման ծավալները, որի հետևանքով ներմուծման մասնաբաժինը 7.72%-ից հասել է 25.2%-ի:



ա) 2016 թ. բ) 2023 թ.

Գծապատկեր 34. ***Թռչնամսի և մսամթերքի ներմուծման մասնաբաժիններն ըստ երկրների***[55]

Եզրակացություն: Աշխարհաքաղաքական ներկա փուլում, որը լի է բազում մարտահրավերներով, պարենային անբավարարությունը լրջագույն սպառնալիք է, որը սոցիալական լարվածությունների պատճառ է, անկայունություն է հաղորդում տնտեսությանը և խաթարում տնտեսության կայուն զարգացման հիմքերը: Ըստ այդմ՝ պարենային անվտանգությունը ՀՀ Կառավարության

[55] Հաշվարկներն ըստ ՊԵԿ-ի տվյալների, https://www.src.am/am/customStatisticsPage?id=128&selected_type=9&selected_date=%D4%B8%D5%B6%D5%A9%D5%A1%D6%81%D5%AB%D5%AF

գերակայություններից է, որը հիմքեր է ստեղծում տնտեսության կայուն զարգացման համար: Այս առումով, օրակարգային նշանակություն ունի պարենային անվտանգության հետևողական քաղաքականության կենսագործումը, որն անմիջականորեն կապված է պարենային անվտանգության համակողմանի գնահատման հետ:

Ստացված արդյունքները վկայում են, որ Հայաստանում պարենային անվտանգության պատկերը բավական մտահոգիչ է: Վերջին տարիներին նկատելիորեն աճել է ցորենի, բուսական յուղի, շաքարավազի, խոզի մսի և թռչնամսի ներմուծումից կախվածության աստիճանը, որը լրջագույն սպառնալիք է Հայաստանի պարենային անվտանգության առումով, քանի որ դրանք ամենօրյա սպառման ապրանքատեսակներ են և բնակչության պարենային զամբյուղի հիմնական մասն են կազմում: Վերոնշյալ ռազմավարական ապրանքատեսակների մասով պարենի անվտանգության հիմնախնդիրների անտեսումը անդառնալի ծանր սոցիալական և տնտեսական հետևանքներ կարող է ունենալ Հայաստանի համար: Ըստ այդմ՝ Պարենային անվտանգության համակարգի զարգացման ռազմավարությունում կարևորվում են պարենի հիմնական տեսակների ձեռքբերման համար համաշխարհային և տարածաշրջանային շուկաների հետ կապերի ամրապնդումը, ապրանքների մատակարարման շղթաների արդյունավետության բարձրացումը, ինչպես նաև պետական և մասնավոր հատվածներում պարենի պահուստների ձևավորման կարողությունների հզորացումը[56]: Այս առումով, նշված համակարգի զարգացման ռազմավարությունն անխուսափելիորեն կապված է ցածր ինքնաբավություն ունեցող ապրանքատեսակների երբեմնի բարձր արտադրական հզորությունները վերականգնելու և ներմուծմանը փոխարինող տեղական արտադրական հնարավորությունների ընդլայնմանն ուղղված գործնական միջոցառումների հետ:

Օգտագործված գրականություն

1. Մարկոսյան Ա., Խաչատրյան Լ., Պարենային անվտանգության ապահովման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում, 21-րդ դար, թիվ 6 (52), 2013, https://cyberleninka.ru/article/n/problemy-obespecheniya-prodovolstvennoj-bezopasnosti-ra-i-puti-ih-resheniya/viewer
2. Մարկոսյան Ա., Պետրոսյան Մ., ՀՀ պարենային անվտանգության արդի հիմնահարցերը, 21-րդ դար, թիվ 6 (34), 2010, https://cyberleninka.ru/article/n/sovremennye-problemy-prodovolstvennoy-bezopasnosti/viewer
3. Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները և համախառն բերքը, ՀՀ վիճակագրական կոմիտեի կայքէջ, https://armstat.am/am/?nid=81&pthid=agr&year=&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC
4. Գրիգորյան Կ., Պարենային անվտանգության ապահովման և աղքատության նվազեցման հիմնախնդիրների լուծման ուղիները

[56] Աղբյուրը՝ Պարենային անվտանգության համակարգի զարգացման ռազմավարություն, էջ 25, https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/GVC4-C2D2-66AC-4391/1083.1.pdf

ՀՀ-ում, Եր., ՀՊԱՀ, 2011, https://haygirk.nla.am/upload/1941-/parenajinanvtang_2011.pdf
5. Հազարամյակի զարգացման նպատակները (ՀԶՆ-ներ) և դրանց թիրախային ցուցանիշները, ՀԶՆ-ներ. 2000–2015 թվականներ, https://www.unicef.org/armenia/media/1766/file/%D4%B1%D5%B7%D5%AD%D5%A1%D6%80%D5%B0%D5%A8,%20%D5%B8%D6%80%20%D5%B4%D5%A5%D5%B6%D6%84%20%D5%A5%D5%B6%D6%84%20%D5%B8%D6%82%D5%A6%D5%B8%D6%82%D5%B4.pdf
6. Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2012, 2015, 2017 թթ. (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 2-նիշ դասակարգման), ՀՀ վիճակագրական կոմիտեի կայքէջ, https://armstat.am/am/?nid=766
7. ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների բազա, https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank_7%20Food%20Security/FS-1-2023.px/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb
8. Պարենային անվտանգության համակարգի զարգացման ռազմավարություն, https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/GVC4-C2D2-66AC-4391/1083.1.pdf
9. Պարենային ապահովություն և աղքատություն, 2013 թ. հունվար-հունիս, 2016 թ. հունվար-հունիս, 2024 թ. հունվար-հունիս, ՀՀ վիճակագրական կոմիտեի կայքէջ, https://armstat.am/am/?nid=81&pthid=pov&year=2024&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC
10. ՊԵԿ-ի տվյալների բազա, https://www.src.am/am/customStatisticsPage?id=128&selected_type=9&selected_date=%D4%B8%D5%B6%D5%A9%D5%A1%D6%81%D5%AB%D5%AF
11. Ավետիսյան Ս., ՀՀ պարենային անվտանգության հրատապ հիմնախնդիրներ, Եր., «Տնտեսագետ», 2014, https://asue.am/upload/files/amberd-economic-policy/Avetisyan_S.pdf
12. Алтухов А.И., Продовольственная безопасность в контексте реализации новой редакции ее доктрины, http://sced.ru/ru/index.php?option=com_content&view=article&id=2363
13. Сущность и содержание продовольственной безопасности, и ее место в системе национальной безопасности, https://cyberleninka.ru/article/n/suschnost-i-soderzhanie-prodovolstvennoy-bezopasnosti-i-ee-mesto-v-sisteme-natsionalnoy-bezopasnosti
14. Продовольственная безопасность – важнейшее условие развития экономики, https://www.avekon.org/papers/579.pdf
15. Тихомирова В. А., Продовольственная безопасность: сущность понятия, https://vest.rea.ru/jour/article/view/108/108
16. FAO, IFAD, UNICEF, WFP and WHO. 2023. The State of Food Security and Nutrition in the World 2023, Urbanization, agrifood systems transformation and healthy diets across the rural–urban continuum. Rome, FAO, page VII, https://doi.org/10.4060/cc3017en
17. Armenia, Annual Country Report 2023, Country Strategic Plan 2019-2025, https://docs.wfp.org/api/documents/WFP-0000157691/download/?_ga=2.79591060.1272975709.1725956427-172178181.1719818587

18. The State of Food Security and Nutrition in the World 2023, https://openknowledge.fao.org/server/api/core/bitstreams/1f66b67b-1e45-45d1-b003-86162fd35dab/content
19. J. von Braun, Food-Security Risks Must Be Comprehensively Addressed, https://gender.cgiar.org/publications/food-security-risks-must-be-comprehensively-addressed
20. Ingram J., Ericksen P., Liverman D., Food Security and Global Enviromental Change, 2010, https://api.pageplace.de/preview/DT0400.9781136530890_A23850234/preview-9781136530890_A23850234.pdf
21. https://tradeint.com/insights/search-for-importers-and-exporters/?utm_source=google&utm_medium=cpc&utm_campaign=general&utm_adgroup=tier1&utm_term=global%20trade%20atlas&gad_source=1&gclid=Cj0KCQiA_NC9BhCkARIsABSnSTZZIkTfgZI8FOvPFb5qzhPsz--aHjZwnWmvaZzJ_1DdJLZqSrJWXvgaAkG0EALw_wcB

ТАТЕВИК МКРТЧЯН
Доцент кафедры экономической теории АГЭУ, кандидат экономических наук

РУЗАННА ГЕВОРГЯН
Доцент кафедры статистики АГЭУ, кандидат экономических наук

АНИ ХАЧАТРЯН
Старший научный сотрудник научно-исследовательского центра АГЭУ "Амберд", кандидат экономических наук

ЛУСИК ХУРШУДЯН
Главный специалист отдела непрерывного образования АГЭУ, аспирант АГЭУ

ТЕРЕЗА ВАРДАНЯН
Магистрант кафедры макроэкономики АГЭУ

Проблемы продовольственной безопасности в РА. – Ключевым элементом устойчивого развития экономики и одним из важнейших условий улучшения качества жизни является обеспечение продовольственной безопасности. Удовлетворение потребностей населения в продовольственной безопасности является одним из приоритетов правительства Республики Армения, на котором базируется видение устойчивого экономического развития в перспективе. В этом контексте реализация последовательной и жизнеспособной политики, направленной на продовольственную безопасность, предполагает всесторонний анализ текущего состояния продовольственной безопасности, особенно в отношении продуктов с низким уровнем самообеспеченности. Соответственно, в рамках данной статьи предпринята попытка изучить формирование ресурсов (производство, импорт и запасы на начало года) и их направления использования (продукты питания, семена, корм

для животных, потери, экспорт) для пшеницы, растительного масла, сахара, мяса птицы и свинины. Также представлены уровни самообеспеченности и зависимости от импорта для каждой товарной группы с рассмотрением географической структуры импорта.

Результаты анализа свидетельствуют о критической важности проблем продовольственной безопасности, указывая на срочную необходимость разработки и реализации целенаправленной политики для их решения, а также выявляют «узкие места», подчеркивая те направления, которые требуют наибольших усилий. В этом отношении особое значение имеет укрепление деловых связей с партнёрскими странами для бесперебойного импорта указанных видов продукции, а также расширение локальных устойчивых производственных возможностей, что позволит снизить риски продовольственной безопасности в долгосрочной перспективе.

Ключевые слова: *продовольственная безопасность, самообеспеченность, пшеница, растительное масло, сахар, свинина, мясо птицы.*
JEL: Q10, Q18
DOI: 10.52174/29538114_2024.3-7

TATEVIK MKRTCHYAN
Associate Professor at the Chair of Theory of Economics ASUE,
PhD in Economics

RUZANNA GEVORGYAN
Associate Professor at the Chair of Statistics ASUE,
PhD in Economics

ANI KHACHATRYAN
Senior researcher at ASUE "Amberd" Research center,
PhD in Economics

LUSIK KHURSHUDYAN
Chief Specialist at ASUE Continuing Education Division,
PhD Student at ASUE

TEREZA VARDANYAN
Graduate Student at the Chair of Macroeconomics ASUE

The Issues of Food Security in RA. – The cornerstone of sustainable economic development and one of the most critical prerequisites for improving the quality of life is ensuring food security. Meeting the population's food security needs is a prioritiy of the Government of the Republic of Armenia, forming the basis of its long-term vision for sustainable economic development. In this context, implementing a consistent and viable policy aimed at food security requires a comprehensive analysis of the current

state of food security, particularly for products with low self-sufficiency levels. Accordingly, this article attempts to study the formation of resources (including production, imports, and beginning-of-year reserves) and their utilization categories (such as food, seeds, animal feed, losses, exports) for wheat, vegetable oil, sugar, poultry meat, and pork. Additionally, the levels of self-sufficiency and import dependency for each product group are presented, along with an analysis of the geographical structure of imports.

The analysis results highlight the critical urgency of addressing food security issues, emphasizing the need for the immediate implementation of targeted policies to resolve them. They also reveal the "bottlenecks" in food supply and outline directions that require the most effort. In this regard, strengthening business ties with partner countries for the uninterrupted import of the aforementioned products and expanding local, sustainable production capacities are of paramount importance, enabling a reduction in food security risks in the long term.

Keywords: *food security, self-sufficiency, wheat, vegetable oil, sugar, pork, poultry*
JEL: Q10, Q18
DOI: 10.52174/29538114_2024.3-7